Տեղեկանք
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 25.1-ին հոդվածում՝

1) 2-րդ մասում՝ «9» թվերը փոխարինել «13» թվերով,

2) 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Սույն օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար որպես վարչական պատասխանատվության միջոց կիրառվում է 0.25, 0.5, 1, 1.5, 2, 3, 4 կամ 5 տուգանային միավոր:»:

Հոդված 2. Օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասում՝ «2» թիվը փոխարինել «3» թվով:

Հոդված 3. Օրենսգրքի 123.3-րդ հոդվածի 1-ին մասում՝ «1» թիվը փոխարինել «1.5» թվով:

Հոդված 4. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 11-րդ մասում՝ «1» թիվը փոխարինել «1.5» թվով:

Հոդված 5. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 17-րդ մասում՝ «2» թիվը փոխարինել «3» թվով:

Հոդված 6. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 18-րդ մասում՝ «3» թիվը փոխարինել «4» թվով:

Հոդված 7. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասում՝ «4» թիվը փոխարինել «5» թվով:

Հոդված 8. Օրենսգրքի 129.3-րդ հոդվածի 1-ին մասում՝ «9 կամ ավելի» թիվը եւ բառերը փոխարինել «13 կամ ավելի» թվով եւ բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 135.2-րդ հոդվածի 1-ին մասում՝ «0.5» թիվը փոխարինել «1» թվով:

Հոդված 10.

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մայիսի 1-ից:~~

2. ~~Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձին մեկ տարվա համար հատկացվում է 13 միավոր՝ նրան հատկացված 9 միավորի ժամկետի ավարտից հետո՝ միավորների վերահաշվարկման օրը, իսկ վարելու իրավունքը կասեցված լինելու դեպքում՝ կասեցման ժամկետի ավարտին հաջորդող օրը:~~

~~3. Սույն օրենքի 2-9-րդ հոդվածները մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց համար ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված օրը:~~

Օրենսգրքի 135.2-րդ հոդվածի 2-րդ մասում՝ «1» թիվը փոխարինել «1.5» թվով:

Հոդված 11.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մայիսի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձին մեկ տարվա համար հատկացված 9 տուգանային միավորի փոխարեն հաշվարկվում է 13 տուգանային միավոր, իսկ օրենքն ուժի մեջ մտնելու պահին վարելու իրավունքը կասեցված անձանց 13 տուգանային միավորը հատկացվում է կասեցման ժամկետի ավարտին հաջորդող օրը: